*********************************************************************************************************

**<u>27.11.2013թ. N 3 նիստ</u>**

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊԼՀ-ի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013թ. ծրագրի հաշվետվություն /Զեկ. Հ. Սահակյան/:

2. ԵՊԼՀ-ի կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. պլանի հաստատում /Զեկ. Ց. Ակոպյան/:

3. «ԵՊԼՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնադրության» հաստատում /Զեկ. Ռ. Խաչատրյան/:

4. ՕԼ ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվություն /Զեկ. Ի. Մաղոյան/:

*****

Լսելով և քննարկելով ռեկտորի աշխատակազմի ղեկավար Հ. Սահակյանի հաշվետվությունը ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013թ. համալիր միջոցառումների ծրագրի մասին և ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի հաղորդումը ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. համալիր միջոցառումների ծրագրի մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել ռեկտորի աշխատակազմի ղեկավար Հ. Սահակյանի ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013թ. համալիր միջոցառումների ծրագրի հաշվետվությունը:
2. ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի աշխատանքի արդյունքները համարել բավարար:
3. Հաստատել ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ներկայացրած ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. համալիր միջոցառումների ծրագիրը:

4. ***Հանձնարարել*** ԵՊԼՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովին՝

4.1. մինչև 2014թ. հունվարի 1-ը ներկայացնել ռեկտորատի հաստատմանը ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. համալիր միջոցառումների ծրագրի իրականացման գործողությունների պլանը, որտեղ հստակ կնշվեն իրականացվելիք ծրագրերի բնութագիրը և ժամանակացույցը:

4.2. համագործակցել ԵՊԼՀ բոլոր ստորաբաժանումների հետ՝ ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի և ռեկտորի աշխատակազմի ղեկավար Հ. Սահակյանի վրա:

*********

Լսելով և քննարկելով երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ց. Ակոպյանի հաղորդումը ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. համալիր միջոցառումների ծրագրի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ԵՊԼՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2014թ. համալիր միջոցառումների ծրագիրը:

*********

Լսելով և քննարկելով ՈԱԿ-ի ղեկավար Ռ. Խաչատրյանի հաղորդումը «ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնի կանոնադրության» մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել 03.02.2012թ. ԵՊԼՀ ռեկտորատի N 18 նիստի որոշմամբ «Երևանի պետական լեզվաբանական համալսարանի որակի ապահովման կենտրոնի կանոնադրության» վերահաստատված տարբերակը:
2. Հաստատել «Երևանի պետական լեզվաբանական համալսարանի որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն»-ը:

*****

Լսելով և քննարկելով Օտար լեզուների ֆակուլտետի 2012-2013 ուս.տարվա արդյունքների վերաբերյալ ՕԼՖ դեկանի պաշտոնակատար Ի. Մադոյանի հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել ՕԼ ֆակուլտետի 2012-2013 ուս.տարվա արդյունքների վերաբերյալ ՕԼՖ դեկանի պաշտոնակատար Ի. Մադոյանի հաշվետվությունը և գնահատել բավարար:

**2. Արձանագրել հետևյալ ձեռքբերումները՝**

- ամփոփիչ ատեստավորման քննությունները անցկացվել են համաձայն ՀՀ կառավարության հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի,
- դասապրոցեսի ամենօրյա հետևողական հսկողության հաճախումների բարելավումը, հետևաբար նաև առաջադիմության բարձրացումը,
- ուսանողների առաջադիմության գնահատման հրապարակայնության ու օբյեկտիվության ապահովումը,
- ֆակուլտետի ուսանողական խորհրդի աշխատանքների կազմակերպման մշտական աջակցությունը,
- ուսանողների հետ տարաբնույթ համագործակցությունը և դիմումների համաձայն կամընտրական խմբերի ձևավորումը:

**3. Արձանագրել հետևյալ թերացումները՝**

3.1. Լիարժեք չեն իրականացվում դպրոցականների հետ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:
3.2. Կրթական ծրագրերի համապատասխանեցման նպատակով ֆակուլտետը չի համագործակցում ՀՀ և արտերկրի բուհերի նմանատիպ ուղղվածություն ունեցող ֆակուլտետների հետ:

**4. Հանձնարարել բոլոր ամբիոնների վարիչներին՝**

4.1. Ամբիոնների նիստերին քննարկման առարկա դարձնել այն բոլոր կարգերը, որոնք անմիջական կապ ունեն ուսումնական գործընթացի հետ:
4.2. Ամբիոնների նիստերում քննարկման առարկա դարձնել բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները, եզրակացություններն ու հանձնաժողովների առաջարկությունները:
4.3. Մինչև ս/թ դեկտեմբերի 20-ը բոլոր ամբիոններին վերանայել և արդիականացնել ավարտական աշխատանքների թեմաները:
4.4. Ավարտական աշխատանքներում կարևորել ուսանողների՝ ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու գիտական կարողությունները:
4.5. Կիսամյակն ամփոփելուց հետո բոլոր ամբիոնների վարիչները ամբիոնի նիստի ժամանակ քննարկման առարկա դարձնեն նախորդ կիսամյակի տվյալները ըստ առաջադիմության, ինչն էլ, իր հերթին, հնարավորություն կտա վեր հանել և վերծանել նախկին թերությունները և համատեղ ուժերով գտնել դրանց բացառման ճիշտ միջոցը:
4.6. Մինչև 2014 թվականի հունիսի 20-ը ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել 2013-2014 ուս.տարվա անփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների վերլուծությունը:

5. **Հանձնարարել ՕԼ ֆակուլտետի դեկանին՝**

5.1. Սերտ համագործակցել ուսանողության հետ կապերի գծով պրոռեկտորի և PR համակարգողի հետ:
5.2. Ամրապնդել որակի ապահովման կենտրոնի հետ համագործակցությունը:

6. Սույն որոշման կատարումը դնել համալսարանի ՕԼ ֆակուլտետի թողարկող ամբիոնների վարիչների վրա, իսկ հսկողությունը՝ ՕԼ ֆակուլտետի դեկանի ժ/պ Ի. Մաղոյանի վրա:

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Ղազարոսի Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Ղազարոսի Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության զարգացման հեռանկարները համաշխարհային փորձի ազդեցության ներքո»** /ԺԳ 00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»/:
*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Հմայակի Պետրոսյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ֆրանսերենի ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Արփինե Մկրտչյանի «Բաղադրիչային վերլուծությունը գեղարվեստական թարգմանության դասընթացներում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել տպագրության ֆրանսերենի ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Արփինե Մկրտչյանի «Բաղադրիչային վերլուծությունը գեղարվեստական թարգմանության դասընթացներում» ուսումնամեթոդական ձեռնարկը:

*******************************************************************************************************************

**<u>20.12.2013թ. N 4 նիստ</u>**

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊԼՀ 2013 թ. բյուջեի կատարողականի հաշվետվություն /Զեկ. Ա. Ավագյան/:
2. ԵՊԼՀ 2014 թ. բյուջեի քննարկում:
3. ԵՊԼՀ-ի 2013-2017թթ Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հաստատում /Զեկ. Ռ. Խաչատրյան/:
4. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:
5. Ընթացիկ հարցեր:

*********

ԼՍԵՑԻՆ – Ֆինանսատնտեսական հարցերով պրոռեկտոր Ա. Ավագյանի հաշվետվությունը ԵՊԼՀ 2013 թ. բյուջեի կատարողականի և ԵՊԼՀ 2014 թ. բյուջեի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն ֆինանսատնտեսական հարցերով պրոռեկտոր Ա. Ավագյանի հաշվետվությունը ԵՊԼՀ 2013 թ. բյուջեի կատարողականի և ԵՊԼՀ 2014 թ. բյուջեի վերաբերյալ:

*********

Լսելով և քննարկելով որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ռ. Խաչատրյանի հաղորդումը ԵՊԼՀ-ի 2013-2017թթ Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ԵՊԼՀ-ի 2013-2017թթ. Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Իռենա Վլադիմիրի Մադոյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝
հետևյալ կազմով.

Հ. Ափյան - նախագահ
Ա. Ավագյան - անդամ
Ա. Բեժանյան - անդամ

Գիտական խորհրդի 57 անդամներից ներկա էին 55-ը, որոնցից քվեարկեցին՝
՝50՛-կողմ, ՝5՛-դեմ, անվավեր է ճանաչվել ՝0՛ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Իռենա Վլադիմիրի Մադոյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, մանկավարժական գիտությունների թեկնածու Իռենա Վլադիմիրի Մադոյանին

շնորհել դոցենտի գիտական կոչում «մանկավարժություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

Լսելով և քննարկելով գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը «Լեզվաբանական/լեզվական միջմշակութային կրթության նորարարական լաբորատորիայի ստեղծում» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի «Լեզվաբանական/լեզվական միջմշակութային կրթության նորարարական լաբորատորիայի ստեղծում» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի 2013թ. ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

Լսելով և քննարկելով "ՅՈՒՆԵՍԿՕ"-ի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ Տ. Թորոսյանի հաղորդումը «Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել “ՅՈՒՆԵՍԿՕ”-ի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ Տ. Թորոսյանի «Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի 2013թ. ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

Լսելով և քննարկելով գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը «Ազգային քաղաքական խոսույթ. պատմությունը որպես ներկա» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի ֆինանսական և բովանդակային հաշվետվության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի գիտություն ընդունել գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի «Ազգային քաղաքական խոսույթ. պատմությունը որպես ներկա» գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի 2013թ. ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

Լսելով և քննարկելով գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտի կազմակերպած ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների

հայտերի ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր 2013» մրցույթի վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Երաշխավորել ֆրանսերենի ամբիոնի հայցորդ Լիլիթ Արկադիի Բաբայանի ներկայացրած «Քաղաքավարի խոսքի կառուցվածքային կաղապարները և դրանց լեզվաոճական արտահայտչամիջոցները ժամանակակից ֆրանսերենում (հայերենի զուգադրությամբ)» ծրագիրը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

Լսելով և քննարկելով Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտի կազմակերպած ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր 2013» մրցույթի վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Երաշխավորել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի ներկայացրած «Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընհանրություններն ու առանձնահատկությունները» ծրագիրը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*****

Լսելով և քննարկելով Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտի կազմակերպած ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր 2013» մրցույթի վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Երաշխավորել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վիոլետտա Սերգեյի Պետրոսյանի ներկայացրած «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացածության գնահատում» ծրագիրը և ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտե:

*********

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններն ու առանձնահատկությունները»** /ԻԳ.00.02 «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ»/:

*Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., Տիգրան Սուրենի Թորոսյանին:*

*********

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վիոլետտա Սերգեյի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Վիոլետտա Սերգեյի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները»** /ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ»/:
*Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., Տիգրան Սուրենի Թորոսյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Անի Մուրադի Միքայելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Անի Մուրադի Միքայելյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Անգլերենի «սկիզբ/վերջ» հասկացությունների լեզվական կարգայնացումը /հայերենի զուգադրությամբ/»** /Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /անգլերեն/ և Ժ.02.03 «Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն»/:
*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Կարինե Շահջանի Աբրահամյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Անի Սարգսի Գյուրջինյանի

թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Անի Սարգսի Գյուրջինյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Դիցաբանական ընդհանրույթների լեզվամշակութային դրսևորումները հեքիաթներում /հայերենի և անգլերենի նյութի հիման վրա/»** /Ժ.02.02 «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն»/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Արմինե Ժորայի Մարտիրոսյանին:*

*********

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Եղոյանի հաղորդումը լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Վարդանուշ Ֆրունզեի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Վարդանուշ Ֆրունզեի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Անգլերենի «բացահայտում/քողարկում» իմաստ արտահայտող բայերի լեզվաձանաչողական վերլուծություն /հայերենի և ռուսերենի զուգադրությամբ/»** /Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» /Անգլերեն/ և Ժ.02.03 «Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն»/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Կարինե Շահջանի Աբրահամյանին:*

*********

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Եղոյանի հաղորդումը ռուս և սլավոնական լեզվաբանության ամբիոնի հայցորդ Նինա Հրանտի Մելքումյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ռուս և սլավոնական լեզվաբանության ամբիոնի հայցորդ Նինա Հրանտի Մելքումյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Производное слово в русском языке как переводческая проблема /на материале субстантивной и адъективной лексики с модификационными формантами/» /«Ռուսերենի ածանցյալ բառը որպես թարգմանական խնդիր /ձևափոխական ածանցյալ գոյականների և ածականների նյութի հիման վրա/»** /Ժ.02.04 «Սլավոնական լեզուներ», ռուսերեն/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Գայանե Վլադիմիրի Մարկոսյանին:*

*********

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Կարինե Արմենի Ելոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Կարինե Արմենի Ելոյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Անգլալեզու մեդիատեքստի թարգմանության ուսուցման ռազմավարությունները»** /ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»/:

*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.դ., պրոֆեսոր Իգոր Կարապետի Կարապետյանին:*

*********

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Գայանե Ռուբենի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Գայանե Ռուբենի Սարգսյանի թեկնածուական

ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Лингводидактические основы создания электронного учебника по русскому языку для гуманитарных специальностей РА»ՀՀ /«հումանիտար մասնագիտությունների համար նախատեսված ռուսերենի էլեկտրոնային դասագրքերի ստեղծման լեզվադիդակտիկական հիմունքները»/** /ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»/:

*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.թ., դոցենտ Մարիա Ալեքսանդրի Եղիազարյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Գյուլի Լյուդվիկի Մարաբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Գյուլի Լյուդվիկի Մարաբյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Դեռահասի մանկավարժական աջակցության հիմնախնդիրը դպրոցում»** /ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»/ :

*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.դ., պրոֆեսոր Աիդա Օնիկի Թոփուզյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անահիտ Պետրոսի Արնաուդյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերահաստատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2006-2010թթ հեռակա ուսուցմամբ ապիրանտ Անահիտ

Պետրոսի Արնաուդյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Մանկավարժական մասնագիտական կոմպետենտության զարգացման մեթոդաբանական հիմքերն ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում»** /ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»/ :

*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.դ., պրոֆեսոր Մելանյա Գրիգորի Աստվածատրյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Անի Սարգսի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Անի Սարգսի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլում /հայերենի զուգադրությամբ/»** /Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» , անգլերեն/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Գրիգորի Գրիգորյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Օֆելյա Արմենի Զաքնոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Օֆելյա Արմենի Զաքնոյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Ջայրույթ հասկացույթի լեզվամշակութային առանձնահատկությունները ժամանակակից անգլերենում (հայերենի զուգադրությամբ)»** /Ժ.02.07 «Գերմանական լեզուներ», անգլերեն/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Սերգեյի Քաջբերունուն:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Եըոյանի հաղորդումը անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Նաիրա Արամի Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Նաիրա Արամի Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Ճակատագիր հասկացույթի լեզվամշակութային առանձնահատկությունները ժամանակակից անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ»** /Ժ.02.07 «Գերմանական լեզուներ», անգլերեն/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Գայանե Վիուլի Եղիազարյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Եըոյանի հաղորդումը անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Ալինա Հենրիկի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել անգլերենի բառագիտության և ոճաբանությանության ամբիոնի հայցորդ Ալինա Հենրիկի Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Փոխաբերությունը որպես տերմինաստեղծ միջոց բժշկագիտական տեքստերում»** /Ժ.02.07 «Գերմանական լեզուներ», անգլերեն/:

*Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Սվետլանա Աշոտի Մարգարյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ Անի Գագիկի Մազմանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ Անի Գագիկի Մազմանյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ **«Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում»** /ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»/:

*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Հմայակի Պետրոսյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ - Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ Անի Հրաչյայի Շահինյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ Անի Հրաչյայի Շահինյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Մտավոր սեփականության կրթության կազմակերպումը գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում**» /ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»/ /ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»/:

*Գիտական ղեկավար հաստատել մ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Հմայակի Պետրոսյանին:*

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի ավագ դասախոս, պ.գ.թ. Գ. Արշակյանի /Ա. Եղիազարյանի համահեղինակությամբ/

«Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները ԽՍՀՄ փլուզումից հետո» մենագրության տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաշխավորել տպագրության ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի ավագ դասախոս, պ.գ.թ. Գ. Արշակյանի /Ա. Եղիազարյանի համահեղինակությամբ/ «Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները ԽՍՀՄ փլուզումից հետո» մենագրությունը:

*******************************************************************************************************************